ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/4910/05/22
Նախագահող դատավոր՝ Ա. Առաքելյան
Դատավորներ՝ Ա. Պողոսյան
Կ. Գևորգյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/4910/05/22**
2024թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

նախագահող Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ
զեկուցող Լ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ք. ՄԿՈՅԱՆ

2024 թվականի օգոստոսի 30-ին

գրավոր ընթացակարգով քննելով Գեղամ Հարությունյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 21.04.2023 թվականի որոշման դեմ վարչական գործով՝ ըստ հայցի Գեղամ Հարությունյանի ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության (այսուհետ՝ Ծառայություն)՝ 13.07.2022 թվականի թիվ 2214840113 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Գեղամ Հարությունյանը պահանջել է անվավեր ճանաչել Ծառայության 13.07.2022 թվականի թիվ 2214840113 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ռ. Խանդանյան) (այսուհետ՝ Դատարան) 28.10.2022 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 21.04.2023 թվականի որոշմամբ Ծառայության վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 28.10.2022 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Գեղամ Հարությունյանը (ներկայացուցիչ՝ Արման Ստեփանյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 28-րդ մասը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասը, 27-րդ հոդվածի 1-ին մասը, «Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-2-րդ մասերը, ՀՀ կառավարության 28.06.2007 թվականի թիվ 955-Ն որոշման Հավելված 1-ի 57-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վիճարկվող թիվ 2214840113 որոշմամբ՝ որպես հաստատված հանգամանք, նշված է. «ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցը ճանապարհի տվյալ ուղղությամբ երեք և ավելի երթևեկելի գոտիների առկայության դեպքում երթևեկել է ձախ եզրային գոտիով»:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 28-րդ մասով նախատեսված արարքի համար վարչական պատասխանատվության ենթարկելիս առաջին հերթին անհրաժեշտ է պարզել՝ արդյոք տվյալ փողոցն ունի միևնույն ուղղությամբ երեք և ավելի երթևեկելի գոտի:

Գործում առկա տեսանյութի և լուսանկարների համաձայն՝ հայցվորի տրանսպորտային միջոցն ընթանում է երեք գոտի ունեցող փողոցի ձախ եզրային գոտիով, սակայն տվյալ փողոցի աջ եզրային գոտին նախատեսված է դեպի աջ երթևեկության համար, իսկ մյուս երկու գոտիները միայն ուղիղ երթևեկելու համար: Հատկանշական է, որ փողոցն ունի երեք համընթաց ուղղության երթևեկելի գոտի, սակայն այդ երեք գոտիները միևնույն ուղղությամբ երթևեկության համար չեն նախատեսված, այլ դրանց ուղղությունը տարբեր է: Հետևապես գործում առկա փաստական հանգամանքները համադրելի չեն կիրառված իրավանորմերի հետ, իսկ իբրև ապացույց ներկայացված տեսանյութի ու լուսանկարների ուսումնասիրությունից անհնար է միանշանակ ասել, որ փողոցում առկա է միևնույն ուղղությամբ երթևեկության երեք և ավելի գոտի, հետևաբար նաև ապացույցների ուսումնասիրությունը ողջամտորեն կասկած է հարուցում իրավախախտման հատկանիշների և գործում առկա փաստական հանգամանքների համապատասխանության վերաբերյալ:

Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունը չի բխում գործի փաստերից և կիրառման ենթակա նյութական իրավանորմերից, քանի որ մի կողմից ՀՀ

Կառավարության 955-Ն որոշման հավելված 1-ի 57-րդ կետում կիրառվում է «միևնույն ուղղությամբ» եզրույթը, ինչը նշանակում է, որ երթևեկության գոտիները բոլորը պետք է նախատեսված լինեն նույն ուղղությամբ երթևեկությունը շարունակելու համար, իսկ մյուս կողմից՝ իրավախախտման համար հիմք հանդիսացած ապացույց համարվող տեսանյութում և լուսանկարում ակնհայտորեն տեսանելի է, որ խնդրո առարկա երեք երթևեկելի գոտիների ուղղությունները տարբեր են:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 21.04.2023 թվականի որոշումը՝ օրինական ուժ տալով Վարչական դատարանի 28.10.2022 թվականի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունի հետևյալ փաստերը.

1) Ծառայության 13.07.2022 թվականի թիվ 2214840113 որոշմամբ Գեղամ Հարությունյանը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 28-րդ մասով ենթարկվել է վարչական տույժի՝ 5.000 ՀՀ դրամի չափով, այն բանի համար, որ «HIGER» մակնիշի 4569S համարանիշի տրանսպորտային միջոցի վարորդը 27.06.2022 թվականին՝ ժամը 10:01-ին, Երևան քաղաքի Գ. Նժդեհ / Մայիսի 9 խաչմերուկի հատվածում, խախտելով ՀՀ կառավարության 28.06.2007 թվականի թիվ 955-Ն որոշման Հավելված թիվ 1-ի 57-րդ կետը, ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցը ճանապարհի տվյալ ուղղությամբ երեք և ավելի երթևեկելի գոտիների առկայության դեպքում երթևեկել է ձախ եզրային գոտիով **(գ. թ. 27-29)**:

2) Գեղամ Հարությունյանը վերադասության կարգով բողոքարկել է 13.07.2022 թվականի թիվ 2214840113 որոշումը, սակայն, Ծառայության պետի 26.07.2022 թվականի թիվ 7-13-7894 որոշմամբ բողոքը թողնվել է առանց բավարարման, իսկ որոշումը՝ անփոփոխ **(գ. թ. 10-11)**:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 28-րդ մասի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի և 27-րդ հոդվածի 1-ին մասի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, որի առկայությունը, սակայն, հերքվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 28-րդ մասով սահմանված զանցակազմի բովանդակությանը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի «գ» կետով իրեն վերապահված լիազորության շրջանակներում 28.06.2007 թվականին ընդունված «Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկը հաստատելու մասին» թիվ 955-Ն որոշմամբ (այսուհետ՝ Թիվ 955-Ն որոշում) հաստատել է Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնները:

Որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնների (այսուհետ՝ Կանոններ) 57-րդ կետը սահմանում է հատուկ կանոն միևնույն ուղղությամբ երթևեկության երեք և ավելի գոտիներ ունեցող ճանապարհով երթևեկության համար: Այդ կանոնի համաձայն՝ բոլոր ճանապարհներին, միևնույն ուղղությամբ երթևեկության երեք և ավելի գոտիների առկայության դեպքում, ձախ եզրայինը թույլատրվում է զբաղեցնել միայն ինտենսիվ երթևեկության ժամանակ, երբ զբաղված են մյուս գոտիները, ինչպես նաև վազանց, ձախ շրջադարձ կամ հետադարձ կատարելիս, իսկ 3,5 տ ավելի թույլատրելի առավելագույն զանգված ունեցող բեռնատար ավտոմոբիլներին և ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցներին՝ միայն ձախ շրջադարձ կամ հետադարձ կատարելու համար: Միակողմ երթևեկությամբ ճանապարհներին կանգառի կամ կայանման նպատակով ձախ եզրային գոտի դուրս գալն իրականացվում է կանոնների 79-րդ կետի պահանջներին համապատասխան:

«Երթևեկության գոտի» հասկացության բովանդակությունը բացահայտված է «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով: Ըստ այդ հոդվածի՝ երթևեկության գոտին երթևեկելի մասի գծանշված կամ չգծանշված երկայնական գոտին է, որի լայնությունը բավարար է տրանսպորտային միջոցների մեկ շարքով երթևեկության համար: Նույն հոդվածի համաձայն՝ կանգառի կետեր (կանգառներ) ունեցող երթուղիներով շարժվող ուղևորներ և (կամ) ուղեբեռներ տեղափոխող տրանսպորտային միջոց՝ ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոց է, ի թիվս այլնի, ավտոբուսը:

Կանոնների 51-րդ կետի համաձայն՝ ոչ ռելսագնաց տրանսպորտային միջոցների համար երթևեկության գոտիների քանակը որոշվում է գծանշմամբ և (կամ) 5.15.1՝ «Երթևեկության ուղղությունները գոտիներով», 5.15.2՝ «Երթևեկության ուղղությունները գոտիով», 5.15.7՝ «Երթևեկության ուղղությունը գոտիներով» և 5.15.8 «Գոտիների քանակը» նշաններով, իսկ եթե դրանք բացակայում են, ապա վարորդների կողմից՝ հաշվի առնելով երթևեկելի մասի լայնությունը, տրանսպորտային միջոցների եզրաչափերը և դրանց միջև անհրաժեշտ միջկողային տարածությունը:

Կանոնների «Ճանապարհային նշաններ» վերտառությամբ բաժնի «Հատուկ թելադրանքի նշաններ (նկար 6)» վերտառությամբ 5-րդ գլխի համաձայն՝ 5.15.1. «Երթևեկության ուղղությունները գոտիներով» ճանապարհային նշանը ցույց է տալիս

գոտիների թիվը և երթևեկության թույլատրելի ուղղությունները՝ դրանցից յուրաքանչյուրով, 5.15.2. «Երթևեկության ուղղությունները գոտիով» ճանապարհային նշանը՝ երթևեկության թույլատրելի ուղղությունները գոտիով: Ձախ եզրային գոտուց ձախ շրջադարձ թույլատրող 5.15.1 և 5.15.2 նշանները թույլատրում են նաև հետադարձն այդ գոտուց: 5.15.1 և 5.15.2 նշանների գործողությունը չի տարածվում ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների վրա:

Կանոնների 57-րդ կետով սահմանված հատուկ կանոնի խախտման համար վարչական պատասխանատվություն է սահմանված Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 124-րդ հոդվածի 28-րդ մասով, որի համաձայն՝ ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների կամ բեռնատար ավտոմոբիլների վարորդների կողմից ճանապարհի տվյալ ուղղությամբ երեք և ավելի երթևեկելի գոտիների առկայության դեպքում ձախ եզրային գոտիով երթևեկելը, բացառությամբ օրենսդրությամբ թույլատրված դեպքերի՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով: Օրենսգրքի 124-րդ հոդվածի 28-րդ մասում նշված օրենսդրությամբ սահմանված դեպքերը ներառում են ձախ շրջադարձ և հետադարձ կատարելու դեպքերը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված զանցակազմն ունի հատուկ սուբյեկտ, այն է՝ ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների կամ բեռնատար ավտոմոբիլների վարորդները: Զանցակազմի օբյեկտիվ կողմը դրսևորվում է ճանապարհի տվյալ ուղղությամբ երեք և ավելի երթևեկելի գոտիների առկայության դեպքում ձախ եզրային գոտիով երթևեկելու ձևով, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ գոտիով երթևեկելն անհրաժեշտ է ձախ շրջադարձ կամ հետադարձ կատարելու համար:

Վերոնշյալ իրավանորմերի համակարգային մեկնաբանությամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցի վարորդի կողմից Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 28-րդ մասի դիսպոզիցիայում նկարագրված ոչ իրավաչափ վարքագիծը կարող է դրսևորվել հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

- ճանապարհի տվյալ ուղղությամբ առկա են երեք և ավելի երթևեկելի գոտիներ, այսինքն՝ ճանապարհի երթևեկելի մասի համընթաց (աջակողմյան) ուղղությամբ առկա են գծանշված կամ չգծանշված երկայնական երեք կամ ավել գոտիներ, որոնցից յուրաքանչյուրի լայնությունը բավարար է տրանսպորտային միջոցների մեկ շարքով երթևեկության համար, իսկ բոլորի լայնությունը միասին բավարար է տրանսպորտային միջոցների առնվազն երեք շարքով երթևեկության համար,

- ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցը երթևեկել է ձախ եզրային գոտիով, այսինքն՝ վարորդը տրանսպորտային միջոցը դուրս է բերել ճանապարհի երթևեկելի մասի հանդիպակաց ուղղությամբ ընթացող գոտուն ամենամոտ երթևեկության գոտի,

- առկա չեն օրենսդրությամբ նախատեսված բացառությունները, այսինքն՝ ձախ եզրային գոտիով երթևեկելն անհրաժեշտ չէ ձախ շրջադարձ կամ հետադարձ կատարելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ 5.15.1՝ «Երթևեկության ուղղությունները գոտիներով» և 5.15.2՝ «Երթևեկության ուղղությունները գոտիով» նշաններով կահավորված խաչմերուկներում, անկախ այդ նշանների վրա պատկերված երթևեկության ուղղությունը ցույց տվող սլաքների կոնֆիգուրացիաներից, ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող (ընդհանուր օգտագործման) տրանսպորտային միջոցների համար երթևեկության բոլոր գոտիների ուղղությունները պետք է դիտարկվեն՝ որպես միևնույն (երթուղուն համապատասխանող) ուղղությամբ, քանի որ այդ տրանսպորտային միջոցների վրա 5.15.1 և 5.15.2 նշանների գործողությունը չի տարածվում:

«Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքը կարգավորում է մեխանիկական տրանսպորտային միջոցներով կատարված, տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով (այսուհետ՝ տեխնիկական միջոցներ) հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունները:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

Նույն օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ վարչական վարույթը բաղկացած է իրավախախտման հատկանիշների պարզման և վարչական ակտի ընդունման փուլերից:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավախախտման հատկանիշների պարզումը վարույթ իրականացնող վարչական մարմնի կողմից տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի հատկանիշների համադրումն է իրավախախտման հատկանիշների հետ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրավախախտման հատկանիշները համարվում են պարզված, երբ տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի հատկանիշների և իրավախախտման հատկանիշների համապատասխանությունը կասկած չի հարուցում, իսկ կասկածի դեպքում մեկնաբանվում է հօգուտ անձի:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով վերոնշյալ իրավանորմերի վերլուծությանը, նշել է, որ «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով

հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի իմաստով իրավախախտման հատկանիշները համարվում են պարզված, այսինքն՝ առկա է իրավախախտման փաստը, եթե տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի և իրավախախտման հատկանիշների միջև առկա է ակնհայտ համընկնում, որը որևէ կասկած չի հարուցում: Այլ կերպ ասած՝ տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների համար անձին պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտ պայման է տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի և իրավախախտման հատկանիշների համապատասխանության կասկած չհարուցելը *(տե՛ս, Սիդա Նազարյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԴ/6199/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը):*

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անձը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 28-րդ մասի հիմքով կարող է վարչական պատասխանատվության ենթարկվել, եթե իրավախախտումն ամրագրած տեսանյութը կամ լուսանկարը թույլ են տալիս հաստատված համարել, որ.

- անձը վարում է ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոց կամ բեռնատար ավտոմոբիլ,
- ճանապարհի տվյալ ուղղությամբ առկա են երեք և ավելի երթևեկելի գոտիներ,
- ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցը կամ բեռնատար ավտոմոբիլը երթևեկում է ձախ եզրային գոտիով,
- ձախ եզրային գոտիով երթևեկելը պայմանավորված չէ ձախ շրջադարձ կամ հետադարձ կատարելու անհրաժեշտությամբ:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործը հարուցվել է Գեղամ Հարությունյանի կողմից ներկայացված վիճարկման հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է անվավեր ճանաչել Ծառայության 13.07.2022 թվականի թիվ 2214840113 որոշումը:

Դատարանը բավարարել է Գեղամ Հարությունյանի հայցը՝ պատճառաբանելով, որ. «(...)*Պատասխանողի կողմից ներկայացված ենթադրյալ իրավախախտման փաստն արձանագրած տեսանյութերի և լուսանկարի հետազոտման արդյունքում Դատարանն արձանագրում է, որ տվյալ ճանապարհահատվածը բաժանված է երեք երթևեկելի գոտիների, որոնցից երկուսով համապատասխան ճանապարհային նշանով թույլատրվում է երթևեկել ուղիղ, իսկ երրորդով՝ աջ: Ըստ այդմ՝ Դատարանն արձանագրում է, որ տեսանյութերով և լուսանկարով չի հաստատվում տվյալ ճանապարհահատվածում միևնույն ուղղությամբ երեք և ավելի երթևեկելի գոտիների*

առկայության փաստը, որպիսի պայմաններում Դատարանը եզրահանգում է, որ տեսանյութում ամրագրված արարքի հատկանիշների և իրավախախտման հատկանիշների համապատասխանությունը կասկած է հարուցում: Նման պայմաններում Դատարանը գտնում է, որ ապացուցված չէ հայցվորի կողմից ՀՀ կառավարության 28.06.2007 թվականի թիվ 955-Ն որոշման հավելված 1-ի 57-րդ կետով սահմանված արգելքը խախտելու, հետևաբար նաև՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 28-րդ մասով նախատեսված զանցանք կատարելու փաստը(...)»:

Վերաքննիչ դատարանի 21.04.2023 թվականի որոշմամբ Ծառայության վերաքննիչ բողոքը բավարարվել է, Դատարանի՝ 28.10.2022 թվականի վճիռը բեկանվել է և փոփոխվել՝ Գեղամ Հարությունյանի հայցը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ. «(...) *տեսանյութերով հաստատվում է տվյալ ճանապարհահատվածում միևնույն ուղղությամբ երեք և ավելի երթևեկելի գոտիների առկայության փաստը, որպիսի պայմաններում Վերաքննիչ դատարանը եզրահանգում է, որ տեսանյութերում ամրագրված արարքի հատկանիշների և իրավախախտման հատկանիշների համապատասխանությունը որևէ կասկած չի հարուցում:*

Հետևաբար, «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ ապացուցված է հայցվորի կողմից ՀՀ կառավարության 28.06.2007 թվականի թիվ 955-Ն որոշման Հավելված 1-ի 57-րդ կետով սահմանված արգելքը խախտելու, հետևաբար նաև՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 28-րդ մասով նախատեսված զանցանք կատարելու փաստը(...)»:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Ծառայության կողմից 13.07.2022 թվականին կայացվել է «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 22148401133 որոշումը, որի համաձայն՝ Գեղամ Հարությունյանը Օրենսգրքի 124-րդ հոդվածի 28-րդ մասով ենթարկվել է վարչական տույժի՝ 5.000 ՀՀ դրամի չափով, այն բանի համար, որ ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող «HIGER» մակնիշի 4569S համարանիշի տրանսպորտային միջոցով 27.06.2022 թվականին՝ ժամը 10:01-ին, Երևան քաղաքի Գ. Նժդեհ/Մայիսի 9 խաչմերուկի հատվածում, ճանապարհի տվյալ ուղղությամբ երեք և ավելի երթևեկելի գոտիների առկայության դեպքում երթևեկել է ձախ եզրային գոտիով:

Գործում առկա է Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված երկու տեսանյութ: Դրանցով նախևառաջ հաստատվում է, որ խնդրո առարկա տրանսպորտային միջոցը կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող ավտոմոբիլ է, և վերջինս երթևեկում է ձախ եզրային գոտիով:

Տեսանյութերից մեկն արձանագրել է տվյալ տրանսպորտային միջոցի ընթացքը մինչև խաչմերուկ հասնելը: Մինչև խաչմերուկ հասնելը ճանապարհն ունի երեք

երթևեկելի գոտի, որոնցից երկուսն ունեն միևնույն ուղղությունը՝ «ուղիղ», իսկ մեկը կահավորված է 5.15.1 ճանապարհային նշանով, և այդ գոտուց թույլատրվում է միայն աջ: Հիմք ընդունելով Կանոններով սահմանված այն կանոնը, որ 5.15.1 և 5.15.2 նշանների գործողությունը չի տարածվում ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների վրա՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «HIGER» մակնիշի 4569S համարանիշի տրանսպորտային միջոցի համար երեք գոտիների ուղղություններն էլ դիտարկվում են որպես միևնույն՝ «ուղիղ», ուղղություն, քանի որ Գեղամ Հարությունյանի վարած տրասպորտային միջոցը հանդիսանում է ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող (ընդհանուր օգտագործման) տրանսպորտային միջոց:

Մյուս տեսանյութն արձանագրել է խնդրո առարկա տրանսպորտային միջոցի ընթացքը խաչմերուկն անցնելուց հետո. տեսանյութով հաստատվում է, որ խաչմերուկն անցնելուց հետո տվյալ տրանսպորտային միջոցը երթևեկում է ձախ եզրային գոտիով, և տվյալ ճանապարհն ունի միևնույն ուղղությամբ երեք երթևեկելի գոտի:

Այսպիսով, երկու տեսնայութերի հետազոտման արդյունքում Վճռաբեկ դատարանը հաստատված է համարում, որ հայցվորի տրանսպորտային միջոցը ձախ եզրային գոտիով երթևեկել է միևնույն ուղղությամբ երեք երթևեկելի գոտի ունեցող ճանապարհով: Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված գոտիով երթևեկությունը պայմանավորված չի եղել ձախ շրջադարձ կամ հետադարձ կատարելու անհրաժեշտությամբ:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված թույլատրելի ապացույցներով՝ երկու տեսանյութով, հաստատվում է հայցվորի կողմից Օրենսգրքի 124-րդ հոդվածի 28-րդ մասով սահմանված վարչական իրավախախտումը կատարելու փաստը, որպիսի պայմաններում վերջինս իրավաչափորեն է ենթարկվել վարչական պատասխանատվության:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը, բավարարելով Գեղամ Հարությունյանի հայցը, եկել է սույն գործի լուծման վերաբերյալ սխալ եզրահանգման, իսկ Վերաքննիչ դատարանը, բեկանելով և փոփոխելով Դատարանի կողմից կայացված վճիռը, կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ: Հետևաբար Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից դատական սխալ թույլ տալու մասին վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար: Նշվածը բավարար հիմք է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը կիրառելու համար:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ բողոք բերող անձ Գեղամ Հարությունյանի կողմից վճռաբեկ բողոքի համար պետական տուրքը վճարված լինելու պարագայում պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված՝ նկատի ունենալով, որ վերջինիս բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 21.04.2023 թվականի որոշումը թողնել անփոփոխ:

2. Վճռաբեկ բողոք բերելու համար պետական տուրքի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

Նախագահող ***Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ***

Զեկուցող ***Լ. ՀԱԿՈԲՅԱՆ***

Ք. ՄԿՈՅԱՆ